ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ 90 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՎ

07.12.2021 13:14

Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի 90 շրջանավարտ 2021թ-ի դեկտեմբերի 6-ին ստացան փաստաբանական գործունեության արտոնագրեր:

Ողջույնի խոսքում Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը նախ շնորհավորեց ՀՀ բոլոր փաստաբաններին մասնագիտական տոնի առթիվ:

«103 տարի հայաստանյան փաստաբանությունը պայքարում է հանուն արդարադատության: Այսօր, վստահաբար կարող ենք ասել, որ ունենք կայացած, անկախ և միասնական ինստիտուտ: Հանդիսանալով քաղաքացիական հասարակության պարտադիր տարր հայաստանյան փաստաբանությունը իր ուրույն տեղն է զբաղեցնում երկրի իրավական համակարգում: Այս կարգավիճակը բոլորիս՝ սեփական մասնագիտական առաքելության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի արդյունք է», -իր խոսքում նշեց Սիմոն Բաբայանը:

Սիմոն Բաբայանը նաև շնորհակալություն հայտնեց փաստաբանական դպրոցի տնօրենին և ողջ աշխատակազմին՝ ունկընդիրների ուսումնառությունը բարձր մակարդակով և պատշաճ որակով կազմակերպելու համար:

Փաստաբաններին շնորհավորեց նաև ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը, նշելով, որ իր պատկերացմամբ փաստաբանի հավաքական կերպարի կարևորագույն հատկանիշները՝ խոհեմությունը, արդարությունը, արիությունը, չափավորությունը, անկախությունը, ինչպես նաև սերն է մարդկանց հանդեպ, որոնցով փաստաբանը պետք է առաջնորդվի իր գործունեության ընթացքում:

Ողջույնի և շնորհավորանքի խոսքերով հանդես եկան նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Կարեն Մեժլումյանը, Մարինե Ֆարմանյանը և Գայանե Դեմիրչյանը: Ելույթներով հանդես եկան նաև Փաստաբանական դպրոցի շրջանավարտներ՝ Ստելլա Սայադխանյանը և Գայանե Գևորգյանը: Նրանք իրենց խոսքում շնորհակալություն հայտնեցին Փաստաբանական դպրոցի դասախոսական կազմին և աշխատակազմին ուսումնառության գործընթացը պատշաճ որակով կազամակերպելու համար:

Ելույթներին հաջորդեցին փաստաբանների

հանդիսավոր երդման և արտոնագրերի հանձնման արարողությունները:







Երևանի Պլազա
բիզնես կենտրոն
GREBUNI



Erebuni Plaza
business c

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })